արձանագրություն,որն ստորագրվում է վերջինիս կողմից: Արձանագրությունում պետք է ամրագրված լինեն քննարկումների ամսաթիվը,թեման,քննարկումների մասնակիցների առաջարկությունները ու դիտողությունները: Մասնակիցները կարող են առաջարկությունները և դիտողությունները ներկայացնել նաև գրավոր: Գրավոր ներկայացված արձանագրություններն ու դիտողությունները կցվում են արձանագրությանը:

11.Հանրային քննարկումներ իրականացնելու նպատակով հանրային քննարկումների հրավերը հրապարակելուց հետո հասարակական հարցումների միջոցով հանրային քննարկումներ կարող են իրականացվել գրավոր կամ բանավոր:
Տվյալ դեպքերում համայնքի գլուղապետարանի ներկայացուցիչը ներկայացնում է համապատասխան իրավական ակտի նախագծի համառոտ նկարագիրը և հարցման ենթակա հարցերի շրջանակը : Հարցման մասնակիցներն իրենց առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնում են հարցումն իրականացնողին : Հարցումների վերաբերյալ կազմվում է գրավոր արձանագրություն, որն ստորագրվում է հարցում կատարողի կողմից:Արձանագրությունում պետք է ամրագրված լինեն հարցումների ամսաթիվը,թեման մասնակիցների առաջարկություններն ու դիտողությունները: Գրավոր ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները կցվում են արձանագրությանը :

12. Հանրային կամ շահագրգիռ անձանց հետ հանդիպումների,բաց լսումների ,քննարկումների ,հասարակական հարցումների,ինչպես նաև հեռահաղորդակցության հնարավոր միջոցներով հանրային քննարկումների կազմակերպումը համայնքի ղեկավարը կարող է պատվիրել այլ անձանց:

III Հանրային քննարկումների արդյունքները և ամփոփումը

13.Հանրային քննարկումների արդյունքում քննարկման դրված հարցերի առնչությամբ ստացված յուրաքանչյուր առաջարկության և դիտողության վերլուծության ,ինչպես նաև դրանց ամփոփման հիման